

ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՑ

(XVIII դարի 90-ական թթ.)

Պ. Ա. ՉՈՐԱՆՅԱՆ

XVIII դարի երկրորդ կեսին Ռուսաստանի արտաքին քաղաքականության ակտիվացման հետևանքով աշխուժացան նաև հայ-ռուսական քաղաքական ու տնտեսական հարաբերությունները, ավելի ուժեղացավ ինչպես հայ, այնպես էլ այսրկովկասյան մյուս ժողովուրդների ձգտումը Ռուսաստանի օժանդակությամբ ազատագրվելու արևելյան բռնապետությունների լծից: Հայ գործիչների համար հստակ էր, որ հայ-ռուսական հարաբերությունները մեկուսի՝ առանց Վրաստանի մասնակցության, չեն կարող ձևավորվել Այսրկովկասում, Վրաստանը էական դեր պիտի խաղար ինչպես իր աշխարհագրական դիրքի, այնպես էլ ռազմաքաղաքական ու տնտեսական շահերի առումով: Ավելին, հայ-ռուսական հարաբերությունների սերտացման համար անհրաժեշտ էր ավելի լայնորեն օժանդակել ոչ միայն վրաց-ռուսական հարաբերությունների բարելավմանը, այլև հայ-վրացական փոխհարաբերությունների խորացմանը: Այդ է պատճառը, որ հայ հասարակական-քաղաքական գործիչները հայ ազատագրական ծրագրերում էական տեղ էին հատկացնում Վրաստանի գերքորոշմանը և փորձում օժանդակել նրա հզորացմանը: Այդ առումով խոստով է Շահամիր Շահամիրյանի օրինակը և վրաց արքունիքի հետ նրա կապերի պատմության փաստը:

XVIII դարի հայ-ռուս-վրացական հարաբերություններում եռանդուն գործունեություն էր ծավալել նաև Հովսեփ Արղությանը, որը մեծ դեր էր խաղացել նաև 1783 թ. ռուս-վրացական Գեորգիևսկի դաշնագրի կնքման գործում¹: Դաշնագրի որոշ կետեր հալ ժողովրդի ազատագրական շարժմանը օժանդակելու համար օգտագործելու միջոցներ էին փնտրում նաև այլ գործիչներ: Շ. Շահամիրյանը մասնավորապես շեշտում էր դաշնագրի 6-րդ կետը և կոչ անում հենվելով այդ կետի վրա ընդարձակել Հայաստանի նկատմամբ Վրաստանի իրավունքների տարածման ու հայ-վրացական պետության ձևավորման հարցը: Այդ իր հերթին ապացուցում է, որ ոչ միայն գոյություն ունեն պայմանագրի հայերեն թարգմանությունը, այլև այն ուղարկվել էր նաև Հնդկաստան, որից օգտված պիտի լինեն Շ. Շահամիրյանը: Առավել կարևոր է, սակայն, այն հանգամանքը, որ այդ պայմանագրով կրկու պետությունները (Վրաստանը և Ռուսաստանը) իրավունք էին ստանում դեսպանություններ փոխանակել:

Վրացական զեսայանությունը Գարսեան Ճովճավաձեի գլխավորությամբ 1784 թ. ճանապարհվում է Պետերբուրգ, իսկ Վրաստանում ռուսական լիազոր ներկայացուցիչ է նշանակվում Ստեփան Բուռնաշևը: 1784 թ. Պետերբուրգ է ժամանում նաև հալ ժողովրդի լիազոր ներկայացուցիչ Ստեփան Դավթյանը: Ղուկաս կաթողիկոսի խնդրանքով Հերակլ II-ը 1784 թ. օգոստոսի 18-ին հանձնարարական նամակ է գրում Պ. Ա. Պետյոմկինին և խնդրում

¹ Վ. Մարտիրոսյան. 1783 թ. Գեորգիևսկի դաշնագրի և հայերը.— ՀՍՍՀ ԳԱ «Երանց հաս. գիտ.» 1978, № 9, էջ 92—100: Նույնի՝ Նոր վավերագրեր Գեորգիևսկի 1783 թ. դաշնագրի մասին.— «Պատմա-րանասիրական հանդես», 1978, № 3:

սբարեհաճ լինել նրա նկատմամբ և օժանդակել նրան²։ Հայ և վրաց ժողովուրդների քաղաքական համագործակցության համար Պետերբուրգում ևս ստեղծվում է կապող օղակ։ Այդ կապերի առավել եռանդուն կազմակերպիչ կրկին հանդես էր գալիս անխոնջ Հ. ԱրղուՅյանը։ Վրաց դեսպանության և Ստեփան Դավթյանի Պետերբուրգ ժամանման իսկ պահից Հ. ԱրղուՅյանը փորձում է զուգորդել նրանց գործունեությունը՝ այդ նպատակով ցուցումներ տալով ինչպես Ս. Դավթյանին, այնպես էլ Գարսևան Ճավճավաձեին։ Այսպես, 1784 թ. հոկտեմբերի սկզբներին Ստեփան Դավթյանին (նույն ինքը՝ Ստեփան Տեր-Սահակյան) նա գրում է. «Ահա դու գիտես, թե զինչ ես առնելոց յայդր (իմա Պետերբուրգում—Պ. Չ.)։ Բավական մխիթարութիւն է լինելոց քեզ ընդ ազնիւ աղա Յովհաննեսին և պարոն Մանշարեց... արքայազունքն ևս, քնեազ Գարսևան էշկաղասբաշին, որք եկեալք են, նորա ևս են քեզ մխիթարութիւն, ունիցիս առ նոսա երթեկութիւն, որպէս իւրեանց սեպհական այր, որ ի ժամ յետ դարձմանդ գրեսցէն, արքային զհավատարմութենէ քումմէն³։

1783 թ. գարնանը ռուս-վրացական դաշնագրի նախապատրաստական աշխատանքների ժամանակ⁴ Հովսեփ ԱրղուՅյանը գրել էր (անշուշտ ռուսական իշխանությունների գիտությամբ) նաև հայ-ռուսական դաշնագրի մի նախագիծ։ Ստեփան Դավթյանին ուղղված վերոհիշյալ նամակում նա գրում է. «Յանցեալ ամին, մինչդեռ սորա յոյժ ջերմ էին ի փրկութիւն մերազնէիցն և երկրին, մեք դաշնագրութեան տեսակ և կամ նիւթ ինչ պատրաստեալ էաք, որոյ սավատն այժմ ուղևորեմ առ քեզ՝ ցուցանել ում պատշաճ տեսանես մերազնեիցն և կամ էշկաղասբաշուն⁵։

Հետաքրքիր է Հ. ԱրղուՅյանի մի նամակը, որ գրված է Աստրախանից 1785 թ. հունվարի 13-ին։ Այդ նամակով նա խնդրում է Յակոբ Ռեյնգսին, որպեսզի վերջինս հայտնի Գարսևան Ճավճավաձեին, թե էջմիածնի կաթողիկոսը իրավունք ունի նրա միջոցով ևս դիմելու կայսրին։ Մեզ չհաջողվեց հայտնաբերել որոշակի գրավոր վկայություն, սակայն միանգամայն տրամաբանական է ենթադրել, որ Հ. ԱրղուՅյանի առաջարկը պետք է նախապես համաձայնեցված լիներ Հերակլ II-ի հետ։ Ուշագրավ է, որ Հ. ԱրղուՅյանի

² В. Н. Гамрекели. Межкавказские политические и торговые связи. Тбилиси, 1980, с. 204—205.

³ Армяно-русские отношения в XVIII веке (сб. док.), 1760—1800 гг., т. IV, Ереван, 1990, с. 323.

⁴ Հավանաբար այդ ժամանակ էլ Հերակլ II-ը ռուսական արքունիք էր ներկայացրել նաև Այսրկովկասի խանությունների զինանշանների մասին իր կազմած տեղեկանքը, որի արխիվային ուսերեն թարգմանությունը անթվական է.

«Герб грузинской — гора з двумя стрелами.

Герб Кахетинской — великомученик Георгий на коне сдящи.

Герб Ерипанской — Араратская гора с ковчегом.

Ганжинской герб — пламен три стропами.

Атабашкой герб — озеро с монастырем.

Герб лавецкой — рука с колием держит.

Герб Борчалу — сабля поперог.

Герб ʏ Шамшадил — ружия.

Герб ʏ Ширвана — волк.

Герб Шеконской — лиса.

На подлинном подписано токо: Иракли (ЦГАДА, Гос. архив, ф. 15, д. 185, л. 239об.).

⁵ Армяно-русские отношения..., т. IV, с. 323, Հմտ. А. Р. Иоаннисян. Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, Ереван, 1990, с. 45—48.

այդ նամակները դրված են վրացերեն⁶։ Հայ-ռուս-վրացական հարաբերությունները նոր կրանդ են ստանում ռուս-թուրքական 1787—91 թթ. պատերազմի ժամանակ։ Թեև պատերազմական գործողությունները տեղի էին ունենում Այսրկովկասի սահմաններից հեռու, սակայն հայ և վրաց ժողովուրդները ներկայացուցիչները որոշակի հույսեր էին կապում Ռուսաստանի կողմից պատերազմի հաղթական ավարտից հետո կնքվելիք պայմանագրի հետ և գտնվում էին Յաշու, որտեղ և պետք է կնքվեր հաշտության պայմանագիրը։ Յաշու էին հավաքվել ինչպես ռուսական բանակի զխաւոր հրամանատարությունն ու պալատական ներկայացուցիչները, այնպես էլ խնդրին առնչվող ժողովուրդների ներկայացուցիչները, այդ թվում Հովսեփ Արղությանը, Ստեփան Դավթյանը, Արևմտյան Վրաստանից՝ Բեսարիոն Գաբաշվիլին և Սիմեոնը, Արևելյան Վրաստանից՝ Գալոգ վարդապետն ու հայազգի Սուլիսան Թումանյանը և այլք։ Յաշու էր գտնվում նաև Ի. Գեղեկանիշվիլին⁷, որի տեղեկությամբ ինքը մի շարք հանդիպումներ է ունեցել Հովսեփ Արղությանի հետ և նրանք միասին են հրավիրվել մասնակցելու հաշտության պայմանագրի ստորագրումից հետո տրված ճաշկերույթին, որտեղ ներկա էին նաև օտարերկրյա ներկայացուցիչներ և թուրքական պատվիրակությունը։

Պայմանագրում ուղղակիորեն չարտացոլվեցին Այսրկովկասին առնչվող հարցեր։ Պատվիրակությունները վերադարձան առանց որոշակի հաջողությունների։ Էականը սակայն այն էր, որ Թուրքիան պայմանագրի հինգերորդ կետով ձեռնպահ էր մնում Քարթլիի նկատմամբ թշնամական բալլերից⁸։

Դեռևս 1787 թ. հոկտեմբերի 15-ին Շահամիր Շահամիրյանը Հերակլ II-ին պրած նամակում իր երախտագիտությունն էր հայտնում նրան 1786 թ. մարտի 22-ին տրված հրովարտակով իշխանական տիտղոս շնորհելու համար և միաժամանակ հորդորում է նրան Վրաստանում իրագործելու մի շարք բարեփոխումներ, որոնք, ըստ Շ. Շահամիրյանի, հնարավոր կդարձնեին Վրաստանի հետագա արագ հզորացումը և Վրաստանի օգնությամբ ու Ռուսաստանի օժանդակությամբ կիրականանար հայ ժողովրդի ազատագրման գործը։ Տեսնելով Հերակլի «բարեպալս ձգտումն» ստվարացնելու Վրաստանի բնակչությունը, խորհուրդ է տալիս աշխարհասփյուռ հայությանն ուղղելու մի «նամակ շնորհաց է պահպանության»՝ նրան ուղարկելով առ այդ կազմված «Օրինակ նամակի պահպանության»։ Շ. Շահամիրյանը առաջարկում էր խմբագրումից հետո հաստատել այն և վերադարձնել իրեն՝ տպագրելու «հարիւրաւոր և հազարաւոր և ցրուցից ի յերեսս յերկրի, զի սովաւ փառաւորեսցեն ամենայն պանդխտացեալք»։

Հերակլ II-ը, իրոք, որոշ խմբագրումից հետո, ստորագրել ու հաստատել է այն (1790 թ. դեկտեմբերի 4) և ուղարկել Մազրաս։ Ռեդերը տպագրվել է 1792 թ. Հարություն Շմավոնյանի տպարանում 1000 օրենակի տպաքանակով, Պահպանվել է այդ ուղերձի հայերեն տպագիր օրինակից վրացերեն կատարված թարգմանության 1819 թ. արտագրությունը⁹։

1795 թ. Աղա Մահմադ խանի կողմից Թիֆլիսի ավերումից հետո Հովսեփ Արղությանը Գրիգորիուպոլից նամակով դիմում է Հերակլ II-ին, և հայտնելով իր դառն ապրումները այդ դեպքերի առթիվ, գրում է. «...յոյս

6 Վրաստանի ԳԱ Կ. Կնկելիձեի անվ. Ձեռագրերի ինստիտուտ, ձև. № 609, թ. 104։

7 Հովհան (Իոնա) Գեղեկանիշվիլու ուղեգրության մեջ հայերի մասին եղած տեղեկությունների քննությունը տե՛ս Պ. Ա. Չորանյան. Վրացական ուղեգրությունները և նրանց տեղեկությունները հայերի մասին. Երևան, 1981, էջ 66—78։

8 Г. Г. Папицадзе. Историческое значение Георгиевского трактата. — «Из исто-рии некоей дружбы», Ереван, 1983, с. 85.

9 Հանդամանորեն տե՛ս Պ. Չորանյան. Վրացական ուղեգրությունները և նրանց տեղեկությունները հայերի մասին, էջ 157—158, 167—181։

Հայաստանեայց աշխարհի և թագավորութիւն ձեր էր, ողբասցեն ընդ ձեզ ամենայն ազգ և ազինք հայոց՝ որք սփռեալք են ի ծագս աշխարհի»¹⁰։ Հ. Արղուիթյանը հայտնում է նաև, թե ինքը մինչև փորձանքի գալը շատերին էր գրել և հայտնել, սակայն նրանք «ոչ հաւատային հաւատարմութեան տանն Վրաց»։ Կատարվածն արդեն փաստ էր և Հովսեփ Արղուիթյանը հուսադրում է Հերակլին, թե Ռուսաստանն անպաշտպան չի թողնի Վրաստանին։ Աղա Մահմադ խանին պատժելու պատրվակով 1796 թ. Ռուսաստանը իրոք կազմակերպում է լայնածավալ արշավանք դեպի Այսրկովկաս։ Հատուկ շրջաբերականով կայսրուհին դիմում է այսրկովկասյան բոլոր ժողովուրդներին՝ օժանդակել ռուսական զորքերին ազատագրելու իրենց Աղա Մահմադ խանի կողմից սպառնացող վտանգից։ Հովսեփ Արղուիթյանը հրավիրվում է մասնակցելու արշավանքին՝ օժանդակելու և ուղեկցելու բանակին¹¹։ Հ. Արղուիթյանը ձեռնամուխ է լինում արշավանքի իր պլանները մշակելուն և ռուսական հրամանատարությանը ներկայացնելուն¹², միաժամանակ Արցախի մելիքներին ու Հերակլ II-ին հորդորում է ավելի հաստատակամորեն օժանդակել զորքին՝ հուսադրելով նրանց մոտակա ազատության հեռանկարով։ Մեզ է հասել մի հետաքրքիր վավերագիր՝ Շամախիից Հերակլ II-ին Հ. Արղուիթյանի գրած 1796 թ. սեպտեմբերի 14-ով թվագրված նամակը¹³, որ արժեքավոր է մի շարք առումներով։ Այն պատասխանն է Հ. Արղուիթյանին Հերակլի գրած նամակի, որը պետք է ներկայացվեր նաև Վալերիան Զուբովին։ Դատելով Հ. Արղուիթյանի պատասխան նամակից, Հերակլը խնդրել էր շուտափույթ օգնություն ցուցաբերել ինչպես դրամական, այնպես էլ զինական առումով, հակառակ դեպքում սպառնալով նման օգնության համար դիմել այլ ուղիներին¹⁴։ Ակնարկելով այդ մասին Հերակլը կցել էր նաև թուրքական սերասկարից իր ստացած նամակը։ Հովսեփ Արղուիթյանը, ոչ առանց ռուսական հրամանատարության ցուցումի, պատասխանում է Հերակլ II-ին. «Ձեր ցանկության կատարումը կլինի շուտով, երբ գնե՞նք զորքով կժամանի ձեր մոտ։ Մինչ այդ Վրաստանին օգնությունը և պաշտպանությունը հնարավոր չէ»¹⁵։ Հ. Արղուիթյանը այնուհետև խորհուրդ է տալիս համբերատար ու հեռատես լինել և օժանդակություն չփնտրել թուրքերի մոտ, «չխմել այն պղտոր ջրից, որն արդեն բազմիցս... աննկարագրելի չարիքներ է բերել»¹⁶։

Ռուսական հրամանատարությունը աշխատում է Հ. Արղուիթյանի ներկայությունը օգտագործել ինչպես խաների հետ բանակցությունների ժամանակ, այնպես էլ բանակը պարենով ապահովելու միջոցներ հայթայթելու համար¹⁷։ Ռուսական զորքերը 1796 թ. գրավում են Դերբենտը, Բաքուն, Շամախին, Շաքին, Գանձակը։ 1796 թ. նոյեմբերի 6-ին մահանում է Նկատերինա II-ը և գահ բարձրացած Պավել I-ի հրամանով արշավանքը ռադարեցվում է։ Ռուսական զորքերը բռնում են տունդարձի ճանապարհը և 1797 թ. մերադառնում Աստրախան։ Ռուսական զորքերի հեռանալուն հետևում է Աղա Մահմադ խանի երկրորդ արշավանքը դեպի Արցախ, որտեղ և նա կնքում է

¹⁰ Армяно-русские отношения, IV, с. 413. Նամակի ուղևորն թարգմ. տե՛ս Письма архиепископа Иосифа Аргутинского о Грузии (1795—1796). — Кавказская старина, Тифлис, 1872, с. 19—30.

¹¹ Армяно-русские отношения, IV, с. 414, 418.

¹² Նույն տեղում, էջ 435—439.

¹³ Նույն տեղում, էջ 439—440; Հմմտ. С. П. Гасарджян, В. К. Восканян. Материалы по русско-кавказским отношениям конца XVIII века. ՊՐԶ, 1977, № 1, էջ 237—238.

¹⁴ Տե՛ս Ս. Գ. Ղուկասյան. Հովսեփ Արղուիթյանը ռուսական զորքերի 1796 թ. Անդրկովկասյան արշավանքի ժամանակ. — ՊՐԶ, 1987, № 3, էջ 91.

¹⁵ Армяно-русские отношения, IV, с. 439—440.

¹⁶ Նույն տեղում, էջ 440.

¹⁷ Նույն տեղում, էջ 443—445.

իր մասկանացուն, Հերակլ II-ի հրավերով ու ռուսական իշխանությունների պահանջով Հովսեփ Արղությանը անցնում է Վրաստան: Երկրի տնտեսական ու հասարակական-քաղաքական ծանր վիճակի պայմաններում Արղությանի ներկայությունը պետք է մեղմեր սոցիալական լարվածությունը: Բանն այն է, որ մեծացել էր արքունիքի քաղաքականության նկատմամբ դժգոհությունը և աճել էր պարսկական կողմնորոշում ունեցող ավատատերերի դիրքը¹⁸: 'Ժողովությունը մեծ էր հատկապես առևտրական կապիտալի ներկայացուցիչների՝ հիմնականում հայազգի բնակչության մոտ: Այն ավարտվեց 1797 թ. թաղավորի դեմ կազմակերպված դավադրությամբ¹⁹: Հովսեփ Արղությանին Վրաստան հրավիրելով Դ. Նևրիդովը 1797 թ. ապրիլի 10-ին գրում էր. «Վրաստանում դործերի ներկա հանգամանքների բերումով Ձեր ներկայությունը Թիֆլիսում ինձ համար ավելի քան անհրաժեշտ է, որովհետև մի ողջ ազգի վստահությունը Ձեր նկատմամբ պահպանվում է, և ես դրանից սպասում եմ, որ եթե կրկին որևէ անհանգստություն տեղի ունենա Թիֆլիսում եղածի նման, Ձերդ բարձր սրբազնություն, կարող եք կանխել Ձեր խորհուրդներով, որում ինձ համոզում է և անցյալ դեպքեր, որի մասին ես չեմ դրանա հաղորդելու բարձր հրամանատարությունը»²⁰: Մինչև 1797 թ. հունիս ամիսը մնալով Վրաստանում Արղությանը Արցախի Ֆրիդոն և Ջիմշիդ մելիքների հետ ճանապարհավորում է Ռուսաստան, Բարձր զնահապետով Արղությանի դործունեությունը Վրաստանում, Հերակլը իր նույն թվականի հունիսի 10-ով թվադրված նամակով հանձնարարում է նրան Վրաստանի վիճակի մասին հաղորդել ռուսական արքունիքին և հավաստել Ռուսաստանի նկատմամբ Հերակլի հավատարմությունը: Նման նամակներ նա հղում է նաև Ի. Վ. Գուդովիչին և Ա. Ա. Բեզբրոդկոյին²¹: 1798 թ. հունվարի 11-ին Թելավում մահանում է Հերակլ II-ը: Այդ մասին տեղեկանալով 1798 թ. մարտի 8-ին Հ. Արղությանը անմիջապես Պետերբուրգից գրում է Մոսկվայում գտնվող Դավիթ արքայազնին. «Փութալ և փութալ ի վերս, փութալ է արքայն...»²²:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ Թիֆլիսից վերադառնալով Ռուսաստան, Արղությանը չի այցելում էջմիածին: Դա թելադրված էր այն թշնամական վերաբերմունքով, որ ունեին մահմեդական տիրակալները ռուսական արշավանքի նկատմամբ և նրանց հետ համագործակցած Հ. Արղությանի վերաբերմամբ, որին և զգուշացնում են իր այցելության հնարավոր վնասակար հետևանքների մասին: Պատահական չէ, որ 1798 թ. մայիսի 27-ին Թաղևու վարդապետին ևս Հ. Արղությանը խորհուրդ է տալիս ձեռնպահ մնալ Ս. Աթոռ այցելելուց: Նա գրում է. «Վասն գնալույդ ի Սուրբ Աթոռն այնպես դիտացիր, զի չեմ անհամաձայն, բայց յայսմ ժամանակի լինեն առաքեցեալ այրն և թուղթն կործանման պատճառ է սուրբ Տանն»²³: Նման զգուշավորու-

¹⁸ «საქართველოს ისტორიის ნარკვევები». ტ. IV. გვ. 774.

¹⁹ Г. Натадзе. Крестьяне «Сахасо в Восточной Грузии в конце XVIII в.— Материалы по истории Грузии и Кавказа, 1937, ч. V, с. 364—365.

²⁰ АВПР, ф. Сношения России с Арменией (СРА), оп. 100/3. 1764—1800 гг., д. 412, л. 56—57 (44—46).

²¹ Նույն տեղում, թ. 58—60: Արղությանին ուղղված Հերակլ II-ի նամակի ռուսերեն թարգմանության մեջ ասված է. «Когда Ваше Высочайшее свящество с отрядом подошного Е. И. В. войска прибыли в Грузию к утешению здешнего христианского народа... тогда составили тем мне и всей общине моей находящейся в нынешних обстоящих обстоятельствах, немалую радость».

²² Մաշտոցի անվ. Մատենադարան (այսուհետև՝ Մատենադարան), ձև. № 2951, էջ 161ա: Հերակլ II-ի մահվան լուրը Հ. Արղությանը ստացել էր բավական ուշացումով: Փետրվարի 14-ին, Հերակլի մահվանից մեկ ամիս անց, նա դեռևս նամակ էր գրում Հերակլին (տե՛ս նույն տեղում, էջ 156բ—157ա):

²³ Մատենադարան, ձև. № 2951, էջ 180բ:

թյունը անհիմն չէր և Ղուկաս կաթողիկոսը իր գահակալության սկզբից ի վեր պահպանում էր այդ զգուշավորությունը²⁴:

Ուրմիայի քրիստոնյա համայնքի առաջնորդները (մելիքները) Հովսեփ Արզուլյանին և Հերակլ 2-րդ թագավորին 1797 թ. մայիսի 12-ին գրած նամակներում նկարագրում են այն ճնշումներն ու հալածանքները, որ կրում են իրենք քրիստոնյա լինելու պատճառով. «Աղա Մահմադ խանը հրամայել է, որ պեսզի մեզ տանջանքների ենթարկեն, ասելով «տեսնենք գուցե նրանց հավատակից ուսները գան նրանց օգնության և մենք հաղթենք նրանց...» Այդպես տանջում են նրանք մեր ազգը... Այժմ բացի բարձրագույն արարչից և ձեզնից ոչ ոքի վրա հույս չունենք... գթացեք այս քրիստոնյաներին, որոնք 15000 ընտանիք են, ծանուցեք այս մասին Հերակլ թագավորին, և մենք նրա քոլոր ռազմական ծախսերը կվճարենք, եթե նա միայն շարժվի մեզ օգնության... գուցե և ոչնչացնենք այս անհավատին և եթե ոչ այդպես, ապա արդեն քրիստոնեություն (այստեղ) չի մնա...»²⁵:

Ավարտելով իրենց նամակը նրանք գրում են. «Հավ կլինեք, եթե մենք ուսներին մասին ոչ մի տեղեկություն չստանայինք, այսքան հայեր չէին լինի գերության մեջ»²⁶:

Նման տրամադրություններ գոյություն ունեին նաև Վրաստանում: Ռուսական օգնությանը դիմելը համընդհանուր պաշտպանություն չէր վայելում և այնտեղ ևս գտնում էին, թե ռուսական կողմնորոշումն է Վրաստանի դեմ ընդակա տիրողների կողմից հաճախացած թշնամանքի պատճառը: Իմանալով Հերակլի հիվանդության մասին, բայց դեռևս ստացած չլինելով նրա մահվան լուրը, Հ. Արզուլյանը 1798 թ. փետրվարի 14-ին գրած նամակում շտապում է խորհուրդներ տալ գահի օրինական ժառանգորդ Գեորգի արքայազնին ինչպես ռուս-վրացական հարաբերությունների կարգավորման, այնպես էլ նրա գահակալության ժամանակ վարվելիք ներքին ու արտաքին քաղաքականության, ու հայ-վրացական հարաբերությունների հիմնահարցերի շուրջ²⁷: Հանգամանորեն պայմանավորվելով Ռուսաստան այցելած Դավիթ արքայազնի հետ հետագա ծրագրերի շուրջ, Հ. Արզուլյանը այս նամակում խորհուրդ է տալիս Գեորգիին առաջնորդվել այդ ծրագրերով, և կրկին Ռուսաստան վերադարձնել արքայազնին՝ «արժանավոր պատասխանալու, խոստանալով նման գործելակերպի դեպքում «մշտնջենական խաղաղութիւն տանդ վրաց և տոհմին ձերոյ առիթ հաստատ կացութեան»»: Հ. Արզուլյանը խորհուրդ է տալիս Գեորգիին «յորմէ դաւանութենէ և իցէ բնակողն ընդ հովանեաւ քով, ունիցիս ի վերայ նորա խնամ և վասն կրոնին մի ունիցէ ինչ օրիշութիւն առաջի քոյ, ըստ որում հայր հայրենեաց էս ընդհանրապէս և բնակողացն որ իր նոսա»: Վրաստանում հնարավոր երկպառակություններ թույլ չտալու մտահոգությամբ Հ. Արզուլյանը խորհուրդ է տալիս Գեորգիին. «ԶՔարթլին (իմա՛ Քարթլին—Գ. Զ.), ՂԿախէթն և զՍօմխիթն պահպանեսցես թարց իրիք ընտրութեան, զի մի ի նոսա ինչ առաւելութիւն և կամ նուազութիւն քոց խնամոց, այլ զամենեսին միապես ջանասցես պահել ի շինութեան»:

Հ. Արզուլյանը մտահոգված է նաև Թիֆլիսում տիրող իրավիճակով: Առանց մանրամասնելու, նա վրաց թագավորազնին խորհուրդ է տալիս. «զարքայանիստ քաղաքդ զԹիֆլիզ լնուցուս զանազան արհեստիք և ուսմամբ և հոգասցես զշինուածս գեղեցիկս ի դմա կառուցանել, զի արքայական քաղաք կոչիլոյ իցէ արժանաւոր և հեռացեալ և զսպեալ իցէ յամենայն շարեաց՝ այս է յանիրաւութեանց, ի զրկանաց, ի մարտից և ի գողութեանց»:

Նամակի հաջորդ կետով տրված խորհուրդը ունեւր արդեն անձնական երանգ: Հովսեփ Ար-

²⁴ А. Р. Иоаннисян Н. Указ. соч., с. 66—67.

²⁵ АВІР, СРА, оп. 100/3, 1790—1800, д. 463, л. 5. Նույն վավերագիրը փոքր տարբերություններով ան՝ նաև АВІР, ф. СРІ, оп. 110/3, 1798—1799, д. 4542, л. 96—97.

²⁶ Նույն տեղում:

²⁷ Մատենադարան, ձեռ. 2951, էջ 157ա—158ա:

դուրսն իրեն թույլ է տալիս մտերմորեն պահանջել. «Մի հաճեսցի բարձրութիւն Ձեր թողուլ զօրը, ե ի գիշերի ի գործ մտանելն, թէ ի դատաստան և թէ ի հաշիս, դի հրամայեաց փրկիչն, որ գնայ ի գիշերի գայթակղի, զի զլոյս աշխարհիս այսորիկ ոչ տեսանէա: Այս իր հերթին համահունչ է Ալ. Զամբակուր-Սրբելիանիի այն հաղորդմանը, թե «Գեորգին 24 ժամվա ընթացքում մեծամասամբ աղոթում էր, ուտում էր, քնում էր և միայն երեք ժամ հազիվ թե տրամադրում էր աշխարհիկ գործերին»²⁴։ Վրաստանի խաղաղությունը կարող էր խախտվել նաև մահմեդականների խռովություններից, ուստի այդպիսիք կանխելու համար առաջարկվում է «ի տարին երկիցս առեալ լիցի հարկ ի տաճկացն Ձերոց և մի՝ առաքեսցին ի պատճառս սնոտի ինչ իրաց թագավորական հարկահանք ի նոսա, որով և նոքա խռովեսցին»։ Ուշագրավ է քննարկվող նամակի նաև հաջորդ կետը. «Ի բոլոր տերութենէ Ձերմէ մատուցին տասանորդքն հացին յարքունիս և ունելով Ձեր զշտեմարանս հացի ի տեղիս հարկաւորս, մի նեղիչիք ի ժամանակս պատերազմի ի ժողովելն զգորս, որով և պաճառեսցի զօրացն ցրուիլ, իսկ եթէ պատերազմ ևս ոչ ունիցէք՝ ի պակասին հացին տրեսցի ժողովրդեանն ի փոխ, որով թարց իրիք վնասու ունիք օժանդակ լինիլ նոցա, բայց ասեմ, զի մի յաճախիցէք զհրամանադիրս ի վերա շտեմարանապահացն բաժանել զհացս արեղայից և երդեցողացն, այլ իւրաքանչիւր ոք բավականացի իւրով ապրուստին»։

Անդրադառնալով վրաստանի անվտանգության և արտաքին հարաբերությունների խնդրին, Հովսեփ Արղուիսյանը խորհուրդ է տալիս Գեորգի թագավորին ունենալ այնքան պատրաստի զորք, որքան հնարավոր է, որովհետև «թարց զօրաց սուտ են ամենայն ջանք, որոց և տացի ոռհիկ ի հանքացն»։ Մշտական բանակի ծախսերը հողալու համար անհրաժեշտ է աշխատանքային վիճակում պահել հանքերը, այլև «ի շեն պահել շրջակայ գիւղորայս նոցին, առունց որոց ոչ դոյ ինչ հաստատութիւն հանքացն»։

Ավարակով այն միջոցառումների թվարկումը, որոնք իր կարծիքով կարող էին նպաստել վրաստանի քաղաքական ու տնտեսական կայունության ամրապնդմանը, Հ. Արղուիսյանը այնուհետև անցնում է հայ-վրացական հարաբերությունների բարելավման անհրաժեշտության հիմնավորմանը։ Ակնարկելով Գեորգիի 1790 թ. համաձայնագիրը Լոռու գավառը Շահամիր Շահամիրյանին ժառանգաբար անօրինելու մասին հրովարտակ շնորհելու հանգամանքը, Հ. Արղուիսյանը պահանջում է. «ԶԼոռին, զոր հաստատ գրով շնորհեալ էք աղայ Շահմիրին և նա ևս յանձնեալ է ի մէլիք Ապովն, հաստատ պահեսչիք զայն ուխտ, որով ոչ թէ ի հովանավորութիւն ձեր հրավիրէք միայն գնդկաբնակ հայս, այլև Կաթսն և Ախլցխայն դատարկեալ բնակչօք նոցա՝ ինանիոց են Փանքակն և Բօրչալուն»։ Հ. Արղուիսյանը հայ-վրացական հարաբերությունների կարգավորման կարևոր հանգամանք է համարում նաև հավատարմության ու պարտավորվածության փոխադարձության պայմանը։ Նա ուղղակի պահանջում է Գեորգիից. «Որովհետև ի Ձեզ պարծեն միշտ հայք և ուրախ են թէ՛ ունիմք մեր զթագավոր ի սերնդոց թագավորացն մերոց, պարտ է Ձեզ ևս բանիւ և դրով զհայրական իմն խնամ ցուցանել նոցա, զի տեսանկով զայգ, որպէս եղևայքն ընդ հովանեաւ ձերով հայք՝ ջերմեռանդաւոր ծառայեսցեն Ձեզ, նոյնպես և արտաքինքն դիմեսցեն ի հովանավորութիւն Ձեր»։

Հովսեփ Արղուիսյանը Գեորգիից հատուկ վերաբերմունք է պահանջում էջմիածնի կաթողիկոսական Աթոռի նկատմամբ։ «Զպատրիարգական Աթոռն սուրբ էջմիածին և զսրբազան պատրիարգ հոգևոր տեսուն ամենայն հայոց, միշտ ունիցիք ի պատուի և մի հատչիք ի նմանէ զնպաստ և զմխիթարութիւն, խնամելով զնա որպէս իսկական թագավոր հայոց»։

²⁴ «საქართველოს ისტორიის ნარკვევები», IV, გვ. 807. Հմմտ. ად. ჯამბაჯუ რ-თ რბე-
ო 6 ნ. მგერის ირავლის... ამბები, თბს, კაკაბაძე, წერილები და მასალები საქართველოს
ისტორიისათვის, წ. 1, 1914, გვ. 39-40.

Ավարտելով իր գրավոր առաջարկությունները, Հ. Արղուսյանը տեղեկացնում է, թե ունի նաև բանավոր հանձնարարություններ, որոնք «ի լուսավորագրունեղ որդույն ձեռմէ գիտաստիք զիմս վասն Ձեր զխորհուրդ և զգիտավորութիւն»:

Հովսեփ Արղուսյանը 1798 թ. մարտի 25-ին Պետերբուրգից գրած նամակում ցավակցություն է հայտնում Գեորգիին հոր մահվան կապակցությամբ և խորհուրդ է տալիս գահակալական պայքարի թուլացնելու համար «շահելով զստահական ածել ի հնազանդութիւն» և ի վերջո «զհանձնարարութիւն բոլոր ազգին, որպէս իսկական թագավորի հայոց, փութով ղորդին ուղեւորել արժանաւոր պատասխանաւ ի դուռն կայսերական»²⁹: Արղուսյանի այս նամակը մեզ է հասել միայն համառոտագրումով և ավարտվում է հետևյալ գրառումով. «Զայլսն ի յորդույն և ի քննազ Գեորգուն գիտել»³⁰, ասել է թե, հանգամանորեն բերանացի նրան կհաղորդեն Պետերբուրգից Վրաստան վերադարձած Դավիթ արքայազնը և վրաց դեսպանության քարտուղար Գեորգի Ավալիշվիլին:

Պարսկաստանում Աղա-Մահմադ շահին փոխարինած Բաբա խանը Գեորգի XII-ից պահանջում է խզել կապերը Ռուսաստանի հետ և որդուն պատանդ ուղարկել պարսից արքունիք, խոստանալով նրան հանձնել Երևանի, Գանձակի, Շաքիի ու Շիրվանի կառավարումը, իսկ հակառակ դեպքում՝ սպառնում էր արշավել Վրաստան: Պետերբուրգից Վրաստան վերադարձած Դավիթ արքայազնը Բաբա խանի պահանջի մասին Հովսեփ Արղուսյանին հաղորդում է 1798 թ. հունիսի 28-ին գրած իր նամակով: Նա գրում է. «Царь приказал, чтобы ты заявил князю Безбородко и Куракину, что наше положение чрезвычайно тяжелое... Постарайся, пожалуйста, если дорожите Грузией и рассчитываете на ее поддержку, то найдите для этого дела какое-нибудь лекарство»³¹. Ստեղծված քաղաքական իրադրության մեջ Ռուսաստանից իրական օգնություն ստանալու երաշխիքներ չունենալով Գեորգի XII-ը, ժամանակ շահելու նպատակով, հակվում է Պարսից արքունիքի հետ բանակցությունները շարունակելու մտքին: Տեղեկանալով այդ ամենի մասին և գիտակցելով ինչպես Վրաստանի, այնպես էլ Այսրկովկասի վրա կախված վտանգի իրական ու լուրջ լինելը, Հ. Արղուսյանը շտապում է ռուսական իշխանություններին հորդորել միջամտելու այսրկովկասյան գործերին, և անընդհատ շտապեցնում է Գեորգի XII-ին դեսպանություն ուղարկել Ռուսաստան: Հ. Արղուսյանը նամակագրությամբ բանակցություններ էր վարում ոչ միայն Գեորգի XII-ի, այլև վրաց արքունիքի ազդեցիկ հանձնավորությունների ու նաև Թիֆլիսի հայ համայնքի՝ արքունիքին մոտ կանգնած գործիչների հետ: Այդ առումով ուշագրավ են Հ. Արղուսյանի 1798 թ. սեպտեմբերի 9-ին գրած նամակները Դավիթ արքայազնին և իր եղբորորդի Սողոմոն Արղուսյանին: Սեպտեմբերի սկզբներին ստանալով Դավիթ արքայազնի նամակը, որտեղ հայտնվում էր Բաբա խանի մոտ Վրաստանից դեսպանություն ուղարկելու մասին, Արղուսյանը իր պատասխան նամակում զայրույթով գրում է. «Յուլիսի 21-ին զիրդ յամսոյն ընկալաք ընդ պարոն Լաշկարովին և քննազ Գարսեվանին և սարմաղաք, որ Դուք աճապարէք Յիցի որդի թաւադ Գեորգին ղրկել առ Բաբա խանն, իսկ աստ ոչ եթէ զոք առաքեք, այլ մեր ղրկած Աւալի որդին ևս պահէք և մէկ օրինաւոր թուղթ չգրէք, ոչ առ ամենաողորմած կայսրն, ոչ առ յուսաւորագրունեղ քննազն և ոչ առ Ձեր դեսպանն...»³²: Շնորհակալություն հայտնելով իր եղբորորդի Սողոմոնին հովանավորելու համար, խորհուրդ է տալիս, որ «եթէ մարդ առաքեսցեն (Պետերբուրգ—Պ. Զ.), նմա յղելն բարուք առնեն»³³, Սողոմոնին ուղղղ-

²⁹ Մատենադարան, ձև. 2951, էջ 163ր:

³⁰ Նույն տեղում: «Քննազ Գեորգին» անտարակույս Գեորգի Ավալիշվիլին է:

³¹ Армянно-русские отношения. IV. с. 478.

³² Մատենադարան, ձև. 2951, էջ 215ր—216ա:

³³ Նույն տեղում, էջ 216ա:

ված նամակում ևս կրկնելով իր զարմանքը, Հ. Արղությանը ավելի մանրամասն տեղեկություններ է տալիս ստեղծված իրադրության մասին: «Ձարմանամ ևս յոյժ ի յիսաստութիւնէ արքային մերոյ, որ պատրաստեալ է զաներն իր առաքել ի պարսիկս և ոստ մինչև ցայսօր ոչ եթէ զաներն, այլ մեկ ծառայ ևս ոչ առաքեալ և որպէս օրէնն էր, ոչ ծանոցոյ մեծի կայսերն զվախճան հօրն իւրոյ և իւր յաջորդելն զաթոռ նորա, ոչ այս միայն, մէկ օրինաւոր և լաւ կարգի դիր ոչ զրեալ մինչև ցայսօր, ոչ առ թագաւորն, ոչ առ լուսաւալայ քննադն և ոչ այլ առ ինչսպաւնս իւր»³⁴: Զգիտեմ որպիսի անբախտութիւն է այդ երկրիդ տիրեալ. ոչ իմ այնքան աշխատանքն և գրածն ազգեաց իւրեանց և ոչ այդքան տառապանքն, ա՜ն և երկիւղն, զորս կրէք, և ոչ պարոնի որդի Դաւիթի աստ զայն և մեծամեծ խօսիչն և այդր լռելն. ո՞ւր է իւր խոստմունքն, որ ասէր շուտով զայլ: Իսկ ողորմած կայսրն մեր սպասէ դոցա մարդոյն և կամ զարձին Աւայի որդի Կեօրկուն, որ եթէ կամին ստանել ենթ հոգանաւորութեան իւրոյ, յայնժամ ցուցցէ զիւր ողորմութիւնն մեծ, որ ահա ունի պատրաստակոյ, աւելի քան, զոր ինքեանք կամէին. թազ, ծիրանի, թուր, կաւալեր, աստղ և այլն ամենայն՝ իւրն և ժառանգին, ևս եղբարցն, զօրքն ևս պատրաստ է: Վասն ձեր՝ վերստին և ալց տեղեացն կամի տրեւել, որ մեր շրջեցաք: Կուսածի ժառանգին ծանոց, որ զնոսա մերն գիտացէ և լուսցի: Աւելի ի՞նչ առնէ, չդիտեմ, մինչև խոնարհեցաւ և ինքն գրեաց առ արքայն, առ ժառանգն և առ ձեզ, ողորմութիւն տեառն ընդ ձեզ է, մի երկընչեք»³⁵: Հ. Արղությանը ռուսական արքունիքի նման պատրաստակամութիւնը բացատրում է իր թափած ջանքերով. «Այս ամենայն ծանուցեալ արքային և արքայ որդիոյն, ևս իմ պարտուցա դերծայ, այժմ ինքեանք գիտացնեն»³⁶. Բացատրելով իր չափազորութիւնը որդեապատճառներն ու նպատակները, Հ. Արղությանը հիշեցնում է. «Իմ կամքն է ծաղկեցուցանել զդոսա և կոչել ոչ միայն թաղավոր վրաց, այլև հայոց»³⁷: Անդրադառնալով մեյիքների ճակատագրի հարցին, Հ. Արղությանը դանում է, որ «մեյիքների բանն կախեալ կայ ի դոցանէ և աստուծով լաւ ևս լինելոց, ասա նոցին ընտանեացն լինիլ միամիտ»³⁸, Բերված այդ նամակը ցույց է տալիս, թե Հ. Արղությանը, որ 1780-ական թթ. հնարավոր էր համարում հայկական թագավորության վերականգնումը, 1790-ական թթ. վերջերին միակ հնարավորը համարում էր հայ-վրացական միացումը թագավորության ստեղծման հեռավաւոր Կասկածից վեր է, որ Հ. Արղությանը միայնակ չէր իր այդ տեսակետի մեջ, նրան հետևում կամ աջակցում էին նաև հայ հասարակական գործիչներից շատերը:

1798 թ. երկրորդ կեսին ինչպես ռուսական արքունիքը, այնպես էլ Հ. Արդությանն ու Արցախի մեկիքները սպասման մեջ էին Հ. Արդությանը Ստեփան Դավթյանին ուղղված նամակներում շեշտում էր սպասողական այդ վիճակը. «Ի Վրացության ու սպասելն մարդոյ առաքեցելոյ ի նոցանէ և սոցա ըստ ամենայնի ձևոնտու պատրաստ լինիլն նոցա, վասն պահպանութեան իւրեանց»³⁹, գրում էր նա Ս. Դավթյանին 1798 թ. սեպտեմբերի 30-ին Պետերբուրգից, իսկ դեկտեմբերի 2-ին Քենեաղ Սուրյունին և պարոն Սապունն գրած նամակում հիշեցնում էր ռապայտի մեր զայտուհան բնեազ Ավարովին»⁴⁰, 1798 թ. դեկտեմբերին Պետերբուրգում ի վերջո ստացվում է Դեմորդի XII-ի

84 Գևորգի XII-ի՝ 1798 թ. հոկտեմբերի 11-ով թվագրված հաժատարմադրերը Գ. Ժավ-
նաթաձևին են հասել միայն նույն թվականի դեկտեմբերին, Գևորգի Ավանդիլի միջոցով
(տե՛ս Ն. ԱՅԻՆԻՍԵՎԻ, Գործերն ինքնագրի խնամակալության մոլեգնություն, տե՛ս 1982,
գլ. 148):

85 Դիւան հայոց պատմութեան, IX, էջ 192—194: Մատենադարան, ձևո. 2951, էջ 214ա:

88 Մատենադարան, ձևո. 2951, էջ 214ր:

87 նույն տեղում:

88 ՆՈՒՐՆ ԵՒՆՈՒՄ:

89 Նույն տեղում, էջ 218ա:

40 նույն տեղում, էջ 234ա:

կողմից ռուսական արքունիքին ուղղված դիմումը, որտեղ առաջարկվում էին այն պայմանները, որոնց ընդունելու դեպքում հնարավոր էր համարվում Ռուսաստանի հովանավորությանը ապավինելը: 1798 թ. դեկտեմբերի 15-ին Գրիգոր վարդապետին ուղղված նամակում Հ. Արղությանը ծանուցում է. «...Վրաց Գորկի արքայի բոլոր թագավորությունն իր մատուցանելն ի խնամակալություն կայսերն մերոյ⁴¹ և սոցա պատրաստիլն առաքել ամենայն շուք թագավորական հաստատուն դաշամբ... Վրաց արքայի զբոլոր բանն իւր՝ մեզ յանձնելն ընդ քնեազ Գարսեվանին»⁴²:

Պետերբուրգում Գեորգի 12-րդի նամակի ստացվելուց անմիջապես հետո՝ դեկտեմբերի 16-ին Վրաստանի դեսպան Գարսևան ճանապարհով Ռուսական արքունիք է ներկայացնում Գեորգի 12-րդի 11 կետից բաղկացած պահանջները: Առաջարկվում էր Վրաստան առաքել 3000-անոց մշտական զորք՝ Վրաստանի պահպանության համար, թույլատրել Արցախի մելիքներին հպատակ ժողովրդի հետ միասին և Վրաստան ներգաղթելու ցանկություն հայտնաթ Ուրմիայի շրջակայքում ապրող քրիստոնյաներին (հայեր և ասորիներ) ընդունման և տեղափոխման արտոնում, վրաց-պարսկական հարաբերությունների բարելավում և այլն: 1799 թ. հունվարի 1-ին Պետերբուրգից Գրիգոր վարդապետին գրած նամակում Հ. Արղությանը գոհունակությամբ նշում է. «...Վրաց բանն ընկալնուլն թագաւորին և պատրաստիլն զամենայն ըստ խընդրոյ նորին. նոյնպէս և մելիքացն բան՝ լինիլն բարւոք...»⁴³:

Հայ հասարակական գործիչները հասկանում էին, որ Այսրկովկասում հայ ժողովրդի ազատագրման հարցի լուծումը շաղկապվում է Ռուսաստանի քաղաքականության հետ, իսկ այն կառուցվում էր միջազգային հարաբերությունների բոլոր հանգամանքների հաշվառումով և պայմանավորվում էր առաջին հերթին Ռուսաստանի հեռամետ նպատակների իրականացմամբ: Ըստ այդմ էլ Ռուսաստանում հայ գործիչները ստիպված են լինում որոշակիացնել իրենց պահանջները, դրանք իրական հողի վրա դնել, միահյուսել այն Ռուսաստանի քաղաքականության հետ և որոշակի փուլեր սահմանել վերջնական նպատակին հասնելու համար:

Ռուսաստանի Այսրկովկաս մուտք գործելու համեմատաբար անաղմուկ միջոցը Վրաստանի հովանավորի դերում հանդես գալով այնտեղ ռուսական զորք մտցնելու ուղին էր: Մելիքների ու Արցախի հարցը լծողվում էր առաջին փուլում ռուս-վրացական հարաբերությունների զարգացման ընթացքի հետ և հայ գործիչները անհամբեր սպասում էին այդ հարաբերությունների զարգացմանը: Նշված հարցերի պարզաբանման էր նվիրված զրույցը, որը կայացավ Մ. Լ. Լաշկարովի և հայ մելիքների միջև 1798 թ. դեկտեմբերի 21-ին: Զրույցի մասին հաշվետվության մեջ նշվում էր, որ մելիքները այն հարցին, թե «куда охотнее желают быть переселены, в Грузию или Россию, отвечали, что для них все равно в России ли жить или в Грузии, поелику и сия так же подданна России как и сами россияне суть, но что предавая оное Высочайшему соизволению, и будучи переселены в Грузию удобнее будет другим армянам в Курдистане и Баязете живущим к ним от времени до времени переходить и умножать число и силы их, нежели когда будут они переселены в Россию, коей удобности курдистанские и баязетские армяне за отдаленностию пределов России лишатся, что и будет для сих последних, коих число простирается

⁴¹ Հ. Արղությանի մեկ այլ նամակից, որ նա գրել էր Գեորգի թագավորին 1798 թ. դեկտեմբերի 16-ին, պարզվում է, որ ստացվել էին նաև զաղտնի նամակներ, որոնց բովանդակության մասին Արղությանը լուր էր իր նամականիում նա գրանցել է միայն, որ ինքը պատասխան է ուղարկել: Թիֆլիս «առ Գիորկի արքայն, յարքայորդույն և մեր Սոյսմոնին ընդ զաղտնի թղթոցն իւրեանց (Մատ., ձեռ. 2951, էջ 238ա)»:

⁴² Մատենադարան, ձեռ. 2951, էջ 237 ա-բ:

⁴³ Նույն տեղում, էջ 241 բ:

до 60 тысяч семей, несколько прискорбно, ибо и они стеною от ига агарян, под коим находятся, крайне желали бы соединены быть с ними меликами для управления и суда над ними, и чтоб будучи одной с ними нации и закона и оставаться с ними же, и что все оное они мелики предадут Высочайшему Его Величеству соизволению, ожидая от него единого себе избавления»⁴⁴. 1799 թ. փետրվարի 11-ին Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիան պատասխան նոտա է հանձնում Գարսևան ճավադաձևին՝ 1798 թ. դեկտեմբերի 16-ին նրա առաջադրած պահանջների բնարկման արդյունքների մասին։ Դ. Ճավադաձևին պատասխանում են, որ 3000-անոց զորքի պահանջը կատարվում է, հայ մելիքները իրենց հպատակ ժողովրդով կդրվեն Վրաստանի ենթակայության ներքո, սակայն պետք է իրավունք ունենան անկաշկանդ փոխադրվելու Ռուսաստան։

Վրաց-ռուսական հարաբերությունների նման զարգացումը շուտով հայտնի է դառնում ինչպես Այսրկովկասում, այնպես էլ Պարսկաստանում։ 1799 թ. մայիսի 15-ին էնդլիիում ռուսական հյուպատոս Մ. Սկիրինսկիին գրում է Արտաքին գործերի կոլեգիա. «Бабахан получил известие от Ибрагим хана Шумиискаго, что Российския войски идут в Грузию с тем, дабы завладеть и Эриваном, а притом бы Карабагских армян перевести в Грузию и в Моздок: то по сей притчине приказал Бабахан Сулейман хану отрядить часть войска в Эриван, вместо гарнизона и в крепости онаго города быть одному велможе из Каджаров, у коего и гарнизон сей был бы в команде, а Ибрагим хану писал, чтоб удерживать армян ласкою»⁴⁵.

Մ. Սկիրինսկիին միջոցով Բաբախ խանին առաջարկվել էր չմիջամտել Վրաստանի գործերին, որովհետև Վրաստանը գտնվում է Ռուսաստանի հովանավորության ներքո⁴⁶։ Այսրկովկասում գործողությունների ծավալման համար կարծես ամեն ինչ արգեն պատրաստ էր, սակայն ժամանակն անցնում էր, իսկ զորքերը չէին շարժվում։ Զ. Արդուբյանի կարծիքով այդ դանդաղումը պայմանավորված էր ավստրո-ռուսական հարաբերություններով. «Իմփերատորի եղբոր դալուստն աստ (իմա՝ Պետերբուրգ—Պ. Զ.) և նշանվին ընդ Աղէքսանդրիա Պաւլովինի Վասն այսմ և փոքր ինչ յամիւն զվրտց բանն»⁴⁷։

1799 թ. փետրվարին Պետերբուրգում և Վրաստանում արդեն տեղյակ էին Պավել 1-ի կարգադրությունների մասին. «Արքայի ամենայն պարգևքն, որպէս յառաջ դրեալ եմք, պատրաստի գոյն, դորացն և թփիցն հրաման լինին գնալ առ յինքեանս... Կավալինցկի՝ սկիզբն գնալն ի Թիֆլիզ որպէս չերեզվեչայնեա պասլաննիկ, այսինքն՝ մեծ, որպէս պատկէր թագաւորի Գալն Կավալինցկուն՝ հանդէպ առաքել զմի արքայորդի, զայս ամենայն գրով պատրաստի լինին։ Մելիքներին՝ յանձնելն արքային՝ հետևիլ և նոցա կամքն լցուցանել... Ունին մեր յոյս, որ արքայն սիրեսցէ և ժողովեսցէ զազգս մեր ընդ հովանեաւ իւրով...»⁴⁸։

Երկար սպասումից հոգնած մելիքները 1799 թվականի մարտի 29-ին կրկին գրավոր դիմում են Պավել 1-ին և հայտնելով Բաբախ խանի սպառնալիքների ու Արցախում և Վրաստանում տիրող ծանր կացության մասին, խնդրում են արագացնել խոստացված օգնության տրամադրումը և թույլ տալ

⁴⁴ Армяно-русские отношения, IV, с. 489.

⁴⁵ АВПР, ф. СРП, оп. 77/6, л. 490, л. 16—17.

⁴⁶ Ն. Օթոմարյան, «Հայաստան», էջ 134։

⁴⁷ Մատենադարան, ձեռ. 2951, էջ 252ա (Զ. Արդուբյանի նամակը «Առ քնեաղն Սօլօմօն և Զարարիայն ի Թիֆլիզ» 1799 թ. փետրվարի 25)։

⁴⁸ Նույն տեղում։

վերադառնալ, հայրենիք⁴⁰։ Շարունակելով նախապատրաստական աշխատանքները և ընդառաջելով Գեորգի XII-ի խնդրանքին Պավել I-ը 1799 թ. ապրիլի 18-ին վրայակալեց զահի ժառանգորդ է հաստատում նրա ավագ որդուն՝ Դավիթ արքայազնին⁵⁰։ Մի քանի օր անց, ապրիլի 22-ին հետևում է նաև Պավել I-ի հրամանագիրը գանձապետ Վասիլևին՝ որպես ամենամյա թոշակ Մելիք Զիմշիդին հատկացնել 1400 ռուբլի, Մելիք Փրիդոնին՝ 1000 ռուբլի, իսկ Զիմշիդի որդի Պողոսին՝ 600 ռուբլի դրամար⁵¹։ Միաժամանակ պատվիրվում է նաև ոսկե ութ շքանշան հայ մելիքներին պարգևատրելու համար⁵²։

Ուշագրավ է նաև այն գրությունը, որը ներկայացվել է ռուսական արքունիք՝ մելիքների խնդրագրին ընդառաջելու անհրաժեշտությունը հիմնավորելու համար։ Այդ վավերագիրը, որ կրում է «Замечания на прошения карабахских мелпков» վերնագիրը պահպանվել է պատճենով և շուրջ ստորագրություն։ Հրատարակության ժամանակ ենթադրվել է, թե այն պետք է կազմված լինի 1799 թ. գարնանը, իսկ հեղինակը ամենայն հավանականությամբ Այսրկովկասի իրադրությանը լավատեսող Ս. Լաշկարովն է⁵³։ Վավերագրում նշվում է, որ «Нация армянская под игом врагов христианства от давних времен стелющаяся... горит желанием видеть себя в независимости и быть под управлением природного владельца. В области Карабагской, яко едином остатке древняя Армения сохранявшем чрез многие веки независимость свою под властью природных владельцев, полагала нация сия при помощи божией и неотъемлемом от нея сильном покровительстве Всероссийския империи ту только льстящую ей надежду. По настоящему же порабощению той области под иго маго-

40 Армяно-русские отношения, IV, с. 501. Ռուսերեն տեքստի տակ հայերեն ստորագրել են «Մելիք Զիմշիդ, մելիք Փրիդոն, Պետրոս Մադաթով», Ուշագրավ է, որ Պետերբուրգում գտնվող մելիք Փրիդոն Բեգլարյանին Գեորգի XII-ը իր 1799 թ. մարտի 22-ի հրովարտակով մելիքություն, կալվածներ ու հպատակներ է շնորհում Վրաստանում (տե՛ս Վրաստանի ԳԱ Զեռագրերի ինստիտուտ, Hd—3978)։

50 АКАК, II, № 24, с. 1147.

51 Армяно-русские отношения, IV, с. 503.

52 Նույն տեղում։

53 Նույն տեղում, էջ 552, ծան. 145։ Ս. Լաշկարովը ծագումով վրացի ռուսական պետական գործիչներից էր, որը սերտ կապի մեջ էր այսրկովկասյան ժողովուրդների ներկայացուցիչների հետ։ Նա հավանաբար դիտեր նաև հայերին։ Այդ մասին վկայող փաստ է 1799 թ. հոկտեմբերի 15-ին Ղուկաս Կարենցի կաթողիկոսի՝ Վ. Կոչուրեյին գրած նամակի ռուսերեն թարգմանության վերջում արված այն նշումը, թե «քնագրի հետ համեմատել է գաղտնի խորհրդական Սերգեյ Լաշկարովը» (տե՛ս նույն տեղում, էջ 513 և 553 ծան. 150)։ Ուշագրության արժանի փաստ է նաև այն, որ Գրիգորիուպոլից 1792 թ. հունիսի 20-ին Շ. Արզումանյանը Հովհ. Լազարյանին գրած նամակով խնդրում էր միջնորդել արքունիքի առաջ Լաշկարովին Ղրիմի նահանգապետ նշանակելու համար, «Այսու գրով մատչիմ առ քեզ յաղագս ստոյգ և ճշմարիտ բարեկամին մերոյ և սրտացալին բոլոր հասարակութեան ազգիս հայոց Սերգեյ Լազարովին, որոյ անբաւ դորովագրութիւնն ոչ է կար մեզ պատմել, զի դու ինքնին իսկ գիտես։ Գիտես, որ ի Դրան Մեծէն եթէ ոք պաշտպան ոչ ունի, ոչ ինչ կարէ շինել վասն ինքեան, որպէս գրնութիւն դորա գիտես, վասն այլոց ի բոլոր սրտէ հետեի զբարիս առնել և վասն ինքեան՝ ոչ երբէք։ Դա իւր յոյսն յետ Աստուծոյ եղևալ է առ քեզ, որ վասն դորա գրաֆ Բեզորոդկուն խօսեցիս, որ նա տիրութիւն դմա առնելով մի կորիցէ աշխատանք դորա, այլ գտցէ զվարձս ծառայութեան իւրոյ և կտոր մի հաց յաղագս զաւակացն իւրոյ, եթէ ըստ հանդիպմանն գուրեմնաթ լինիցի ի Ղրիմ, յոյժ բարւոյ լինի և կամ եթէ հաճոյ երեկոցի գրաֆին, որ զգա կարգաւորեցի ողորմած թագուհին, որ զա յատկապէս հետեցի զազգս հայոց և այլ քրիստոնէից, յամենայն տեղեաց ժողովել աստ, կարի շուտով բազմանան և ազգ մեր լինի բախտաւոր։ Այսբանս ըստ խնդրոյ և ըստ խորհրդակցութեան իւրոյ գրեցի առ քեզ, աղաչեմ մի անտես առնել զդա, այլ ցրպէս ազգ քոյ ընկալցիս, զի բարեբար է նոցա և մեղ...» (Մատենադարան, ձեռ. 2949, էջ 266բ)։

местан, не токмо заградилась для нации армянской перспектива сия, по утверждением в Карабаге персов, овладевших крепкими тамошними местами, естественном положении своим в ущельях Кавказа почти неприступными, подвергается и самая Грузия, под высочайшим Всероссийского императорского двора состоящая, по обнажению пределов ее с сей стороны частым и внезапным впадениям их безпокойство и разорение за собою влекущим. Уважение сие по одному только участию Всероссийския империи в благосостоянии и обезпечении целости царства грузинскаго есть уже столько убедительно, что нельзя не ожидать благоволения на сию мелников просьбу разрешения...»⁵⁴

Մելիքների խնդրանքին ընդառաջելը Ռուսաստանի համար նախընտրելի է նաև այլ առումով: Գրուբյան հեղինակը համոզված է, որ «учрежденное единожды под управлением природных начальников сие армян в собственном их отечестве поселение под сению мощного и одним именем в странах тех страшного Всероссийския империи покровительства составит все гдѣ твердом положении сообщество, которое по вышенъясненному толь сильно действующему над умами их патриотизму ежедневно возрастать, а по свойствамъ имъ предприимчивости и трудолюбию... вяще и вяще преуспевать будет. Коликия важности дело сие произведет для России пользы даъновидность политики предугосмотреть может явственно»⁵⁵. Ելնելով այս հեռահար նպատակների իրականացման անհրաժեշտությունից, գրուբյան հեղինակը գտնում է, որ որպես առաջին քայլ պետք է ընդառաջել մելիքների խնդրանքին և նրանց բնակության վայր հատկացնել վրաց թագավորության սահմանների մեջ մտած և մարդաթափ եղած Հայաստանի Ղազարի գավառում⁵⁶: Հայկական այդ գավառի վերականգնացումը հավասարապես ձեռնտու պետք է լինի և՛ հայ, և՛ թե վրաց թագավորությանը: Առաջարկվում է Արցախի հայ մելիքներին ոգևորելու նպատակով Ա. Նվերներ ու շքանշաններ հանձնել մելիքներին: Բ. Վրաց թագավորին համոզել ևշված տարածքը զիջելու հայ մելիքներին: Գ. Հայ և վրաց կողմերի միջև պայմանավորվածությունը պետք է հանդիսավոր պայմաններում ձևակերպում ստանա: Գ. Մելիքներին թույլատրել մշտական զորք ունենալ և դրա համար նրանց վարկ տրամադրել: Բացի այդ առաջարկվում է նաև «...е знак и память высочайшаго к нации армянской покровительства, пожаловать колонии сей несколько артиллерийских орудий с достаточною к оным принадлежностію и для обучения употреблению сих орудій позволить определить несколько человек из сей нации в состоящих в Грузіи русскіе войски»⁵⁷.

1799 թ. հունիսի 2-ին հրապարակվում է Պավել I կայսեր հրովարտակը, որտեղ Արցախի մելիքներին հայտնվում է, թե ընդառաջելով մինիստրության կողմից իրեն ներկայացված զեկուցագրերին, թույլատրվում է նրանց հպատակ ժողովրդի հետ միասին բնակվել կայսրության սահմաններում և կամ Ռուսաստանի հովանավորության տակ գտնվող Գեորգիի թագավորության մեջ և ըստ մելիքների խնդրագրի նրանց վիճակը բարվոքելու նպատակով նշանակվում են թոշակներ և տրվում են շքանշաններ⁵⁸: Այդ հրովարտակին հա-

⁵⁴ Այդ հանգամանքը հասկանում էր նաև Իրրադիմ խանը: 1796 թ. վալերիան Զուրովին հղած նամակում նա գրում էր. «...кгда город сей (իմ. Շուշին- Գ. Զ.) будет Еями сохранен, то можете обладать и вселенною...» (АВРР, ф. СРА, оп. 100/3, 1764—1800 гг., т. 462, л. 48—49).

⁵⁵ Նույն տեղում, էջ 506:

⁵⁶ XVIII դարի վերջերին Ղազարի գավառը տարածվում էր մինչև Դիլիջանի շրջանը, որտեղ և գտնվում էր գավառի թեմի կենտրոնը Հաղարծնի վանքը (տե՛ս Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 9):

⁵⁷ Նույն տեղում:

⁵⁸ Նույն տեղում, էջ 507:

շորդում է Պավել I-ի նամակը վրաց Գեորգի XII-ին (1799 թ. հունիսի 3), որտեղ ծանուցում է նրան մեղիքներին հպատակ ժողովրդի հետ վրաստանում բնակվելու թույլտվություն տալու իր որոշման մասին, նրանց պետք է նաև որոշակի արտոնություններ տրվեն⁶⁰։ Այս նամակը հանձնվում է մեղիքներին, որոնք պետք է այն ներկայացնեն Գեորգի XII թագավորին իրենց վերադարձի ժամանակ։ Մեղիքներն այսպիսով Պետերբուրգում այլևս անելիքներ չունենին և բռնում են տունդարձի ճանապարհը Պ. Կովալենսկու հետ միասին։ Հայտնի է, որ 1799 թ. օգոստոսին նրանք արդեն գտնվում էին Աստրախանում, որտեղ և Մելիք Ջիմչիգի անունով ստացվել էր Բաբախանի դեռևս 1799 թ. հունվարին գրված նամակը նրա Պարսկաստան, վերադառնալու և պարսկահպատակ մնալու առաջարկով և իր կողմից հովանավորություն ստանալու խոստումներով⁶¹։ Ստացված նամակի մասին տեղյակ է պահվում Պ. Կովալենսկին, որն այդ մասին իր հերթին հաղորդում է արքունիք։ Նույն օրն իսկ (օգոստոսի 17) ռուսական արքունիք է առաքվում նաև Մելիք Ջիմչիգի նամակը, որտեղ վերջինս հավաստիացնում է, թե ինքը չի դրժի Ռուսաստանի նկատմամբ ունեցած իր հավատարմությունը⁶²։

Մեղիքները դեռևս գտնվում էին Աստրախանում և չէին ճանապարհվել Թիֆլիս, երբ Հ. Արդությանը 1799 թ. սեպտեմբերի 1-ին Պետերբուրգից գրում է Գեորգի թագավորին. «Յուսամ, գի և վեհագնեայ Պետր Իվանիչ կավալինց-կին եկեալ իցէ և ձեր արքայական բարձրութիւն միամտեալ վասն ամենայնի։ Լսեմք զչինումն կամրջաց, որ զօրքն գան»⁶³։ Նա հանձնարարություն ուներ հաղորդելու վրաց արքային, թե «Բաթալ փաշայ (որ աստ էր և մեր ամենաողորմած թագաւորի բանին և հաճութեամբ սուլթանն թուրքաց շնորհաց զանցանս նորա և յետ նմա զսերսկերութիւնն Անատոլու), այժմ ի Ղոխմու գնացեալ է ի Տրապիզոն և ինձ խնդրէ հաւատարմացուցանել ձերոյ բարձրութեանն, որ և ոչ է թողլոց լիեզգի ի յԱխալցխայ, որպէս հարազատ երկուց կայսերացն աստուած տացէ այսպէս լինիլ»⁶⁴։

Ռուս-թուրքական մերձեցումը, որ պայմանավորված էր Նապոլեոնի ծգիպատական արշավանքով ու ավարտվեց 1799 թ. հունվարին կնքված ռուս-թուրքական պայմանագրի ստորագրումով⁶⁵, նպաստավոր պայմաններ էր ստեղծում Ռուսաստանի կողմից Այսբկովկասի նվաճումը իրականացնելու համար։ Այդ հանգամանքը ևս չի վրիպել Հ. Արդությանի ուշադրությունից։ 1799 թ. մարտի 3-ին Պետերբուրգից Թիֆլիս առաքած իր նամակում գեղարդակիր Յովհաննես եպիսկոպոսին նա գրում է. «... Մեր ամենաողորմած կայսրն ունի յոյժ բարեկամական կապակցութիւն ընդ պետին հազարացուց և նա կայ առ հրամանս մեծութեան սորին՝ յոյժ խորին հնազանդութեամբ և այս յատուկ պարգև յաստուծոյ է՝ յաղագս քրիստոնեական ազգին...»⁶⁶։ Առավել մեծ տպավորություն պիտի գործեր այն լուրը, թե «ամենաողորմած կայսեր զրօշակն յամենայն տեղիս յաղթող է և զօրաւոր։ Մեր գրաֆ Սուվորովն բոլոր Եւրոպիայ ազատեաց ի լծոյ անհաւատ ֆռանցուսացն...»⁶⁷։

⁶⁰ Նույն տեղում, էջ 507—508։

⁶¹ АВРР, ф. СРП, оп. 77/6, 1796—1800, л. 473, л. 307, 310.

⁶² Армяно-русские отношения, IV, с. 510.

⁶³ Մատենադարան, ձեռ. № 2951, էջ 292ր։

⁶⁴ Նույն տեղում, էջ 293ա։

⁶⁵ 1797 թ. Կոստանդնուպոլսում նշանակվելով լիազոր դեսպան (մինիստր) վասիլի Ստեփանի Տամարան 1799 թ. Թուրքիայի հետ կնքած պայմանագրի համար պարգևատրվել էր լեհաստանում 1500 անձերով և կոմանդորությամբ՝ 1000 ռուբլի եկամուտով (տե՛ս Архив графов Моравиновых, т. I. Предисловие и примечания В. А. Бяльбасова, СПб., 1901, с. 177, прим. 1)։

⁶⁶ Նույն տեղում, էջ 253ա։

⁶⁷ Նույն տեղում, էջ 293ա։

Աստրախանից մեկիքներն ու Պ. Կովալենսկին 1799 թ. սեպտեմբերի 9-ին ճանապարհվում են Ղզլար⁶⁷, որտեղից Խիֆիս են հասնում միայն նոյեմբերի 26-ին:

1800 թ. փետրվարի 29-ին Գեորգի XII-ի հրամանագրով Մելիք Ջիմշիգին նրա պահանջած Ղաղախ գավառի փոխարեն շնորհվում է Լոռու գավառը՝ պայմանով, որ եթե Շահամիր Շահամիրյանի ժառանգներից որևէ մեկը ներկայանա, ապա Լոռու փոխարեն Մելիք Ջիմշիգին կշնորհվի այլ տարածք⁶⁸: Նրան է հանձնվում նաև Արցախից Դսեղ գյուղում ապաստանած ժողովուրդը: 1799 թ. դեկտեմբերին էջմիածնում վախճանված Ղուկաս կաթողիկոսից հետո կաթողիկոսական գահի շուրջ սլաքաբար սկսվեց, իր մեջ ներառելով հայ հոգևոր ու աշխարհիկ հասարակության ուժն ու եռանդը ինչպես Այսրկովկասում, այնպես էլ Կոստանդնուպոլսում և Ռուսաստանում: Ղուկաս կաթողիկոսի մահվանից որոշ ժամանակ անց էջմիածնի միաբանությանն է դիմում Գեորգի XII-ը: Նա գրում է, թե քանի որ Վրաց տերությունը «ոչ է օտար ի սրբոյ Աթոռոյդ, այլ ունիմք և մեք մասն, և բոլոր ազգքն հայոց կոչեն զմեզ արքայ ինքեանց, նաև դիտեն զմեզ ազգական արքայիցն հայոց, արդ եթէ այդպես է, ապա ուրեմն պարտիք և դուք լսող լինիլ սրբոյ Աթոռոյդ օգտակամ բանիցն մերոց և տալ հաւանութիւն իսկ»:

Գեորգի XII-ը զգուշացնում է էջմիածնականներին, թե «ներկայումս վիճակ հայրապետութեան է Յովսէփ արքեպիսկոպոսին, և նա ունի արժանաւորութիւն իսկ և կարողութիւն բարեօրէն կառավարելոյ զսուրբ Աթոռդ և զմիաբանութիւնն ձեր, իսկ եթէ ոք վազ ուզեսցէ նախքան զգալ Յովսէփ արքեպիսկոպոսին և դուք կացուցանէք այնպիսոյն հայրապետ և օծանէք, զիտառիք այնպէս է լինելոց, որպէս ի ժամանակս քութուրին, և անվերջանալի խռովութիւն և երկպառակութիւն լառաջանալոց է և որքան ի յիս կարողութիւն գոյ, մինչև ի հեղումն արեանս ջանալոց եմ ի վերոյ օրինաւոր առաջադրութեանս...»⁶⁹:

Հետևելով կաթողիկոս Հ. Արղությանը 1801 թ. փետրվարին ժամանեց Խիֆիս: Խիֆիսում նա մասնակցեց երկու ամիս առաջ վախճանված Գեորգի XII-ի թաղման արարողությանը և դեռևս թագավորի կենդանության օրոք (1800 թ. դեկտեմբերի 18) կազմված և 1801 թ. հունվարի 18-ին Պետերբուրգում հրապարակված՝ Վրաստանը Ռուսաստանին միացնելու մասին Պավել I-ի մանիֆեստի Խիֆիսում հրապարակման հանդեսին (1801 թ. փետրվարի 16—17):

1801 թ. մարտի 6-ին Պետերբուրգում մշակվեցին Քարթլ-Կախեթի նոր կառավարչության կանոնները, իսկ մարտի 11-ին Ռուսաստանի պետական Սենատը գեներալ նահանգապետ նշանակեց Կնորինգին: Պավել I-ի մահից

⁶⁷ Մատենադարան, կաթ. դիվան, թղթ. 9, վավ. 132, էջ 1: Պահպանվել է մելիք Ջիմշիգի Աստրախանից Պավել I-ին դրած մի նամակը, որ թվագրված է 1799 թ. սեպտեմբերի 22-ով: Նամակում նա խնդրում է թույլ տալ Աստրախանում գտնվող իր ազգականներին, որպեսզի «... восприняли на себя все знаки приличия их породе и получа свое достоинство не именовались более Ивановыми, но князьями Аршакунянскими... и употребляли везде герб рода своего» (Армяно-русские отношения, IV, с. 51!): Հետաքրքիր է, որ նամակը ստորագրված է «Малой Армией Шутинской и протчих провинций владетель мелник Чешикг Шахназаров князь Аршакунянский» (նույն տեղում): Պետք է նշել, որ Արցախի մելիքների այդ մտայնությունը, թե իրենց տոհմը ծագում է Արշակունիներից, նոր չէր: Դեռևս 1781 թ. սեպտեմբերի 2-ին Աղամ և Բեգլար մելիքների Եկատերինա II-ին ուղղած նամակում նշում էին. «Մեր ի ազգաց հայոց ի տանիցն Արշակունեաց և Աղանից ի արքունական գահոյից մնացեալ աղնիւ ղինաւորացէն ժառանգ մելիքներս և մեր բոլոր երկիրս իշխանօվքն հանդերձ...» (նույն տեղում, էջ 181):

⁶⁸ Պ. Ա. Չոբանյան. Հնդկահայ գաղթօջախի պատմությունից. — ՊՐՀ, 1988, № 1, էջ 183—191:

⁶⁹ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 9, վավ. 168:

հետո դա՛հ բարձրացած Ալեքսանդր I-ի հրովարտական (1801 թ. սեպտեմբերի 12) հայտարարվեց Վրաստանի միացումը Ռուսաստանին:

Վրաց պետականության վերացումից հետո բնականաբար հայ ժողովուրդը չէր կարող հայոց պետականության վերականգնման կամ ստեղծման պատրանքներ ունենալ, սակայն Ռուսաստանի հետագա անաշխարհացման մեջ տեսնում էր երաշխիքներ իր ֆիզիկական, տնտեսական ու մշակութային գոյության պահպանման համար: Ուստի ողջունելով Ռուսաստանի մուտքը Այսրկովկաս, հայազգի գործիչները ըստ ամենայնի աջակցում էին նաև ռուսական արտաքին քաղաքականության իրականացմանը:

ИЗ ИСТОРИИ ПОЛИТИЧЕСКОЙ ОРИЕНТАЦИИ АРМЯНСКОГО НАРОДА

(90-е годы XVIII века)

П. А. ЧОБАНЯН

Резюме

В последние десятилетия XVIII века в связи с активизацией восточной политики России оживились также армяно-русские политические и экономические связи, значительно усилилось стремление армянского и грузинского народов с помощью России освободиться от ига восточных деспотий. Схожесть исторических судеб и политических задач объективно выдвигала необходимость сотрудничества политических деятелей этих народов. Духовные и политические руководители не только следили за деятельностью друг друга, но и согласовывали свои политические шаги, часто пытались поддерживать друг друга во время сношений с другими государствами. В конце XVIII в. энергичную деятельность в этом направлении развернул предводитель армян России Иосиф Аргутян. Связывая дело освобождения армянского народа от турко-персидского ига с продвижением России в Закавказье, он особое внимание уделял позиции Грузии, пытался всячески способствовать ее усилению, согласовав армяно-грузинской политикой гарантировать национальную безопасность обоих народов. Этими намерениями продиктовано не только программное письмо Иосифа Аргутяна грузинскому царю Георгию XII от 14 февраля 1798 г., в котором он дает царю ряд советов для преодоления кризиса в Грузии, но и его многочисленные попытки содействовать улучшению русско-грузинских отношений. Хотя после потери Грузией своей государственности в 1801 г. армянские политические деятели не могли уже питать иллюзий по поводу восстановления армянского государства, они видели гарантии для сохранения физической, экономической и культурной безопасности народа в продвижении России в Закавказье и всячески содействовали осуществлению внешней политики России.